## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

**Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 9 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝**

1) Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նշանակության հողամասերին կից ինքնակամ զբաղեցրած հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասին:

2) Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին:

4) 0.02643 հա բնակավայրերի նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի և 66-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հատակագծերը, քաղաքացիների դիմումները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիներին պատկանող բնակավայրերի նշանակության հողամասերից ավել օգտագործվող տարածքները ընդգրկված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ *ավագանին որոշում է.*

1. Քաղաքացի Վիգեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 40 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0222-0040) բնակավայրերի նշանակության 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 105.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 78.8 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 107000 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացի Վիգեն Ենգիբարի Ադամյանին:
2. Քաղաքացի Զավեն Ենգիբարի Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 16-րդ թաղամաս թիվ 41 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0222-0041) բնակավայրերի նշանակության 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 20%՝ 105.0 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը: Մնացած ավել օգտագործվող 4.2 քմ հողամասը՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների, ուղղակի վաճառքի ձևով, 5800 ՀՀ դրամով (կադաստրային արժեքի 30%, վճարել համայնքային բյուջե 900105225172 հաշվեհամարին) օտարել քաղաքացի Վիգեն Ենգիբարի Ադամյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները՝ *ավագանին որոշում է*.

1. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Հակոբ Առաքելի Վիրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0327-0005 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 2536951) 1.37 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ձկնաբուծական արհեստական լճակներ կառուցելու համար:

2. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Վիոլետա Յուրիի Գաբրիելյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0177 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 10062019-07-0059) 0.4047 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի և վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, անասնապահական տնտեսություն կառուցելու համար:

3. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Վաչագան Սոսի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0331-0035 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 26082020-07-0094) 1.1615 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:

4. Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող Վաղինակ Ռազմիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 07-054-0315-0186 կադաստրային ծածկագրով (սեփականության վկայական N 17082020-07-0071) 0.09979 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ըստ գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն կառուցելու համար:

5. Նշված փոփոխությունները ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.91289 հա (սեփականության վկայական N 15072020-07-0085, ծածկագիր 07-054-0310-0037) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն ուղղակի վաճառքով ձևով, ընդլայնման նպատակով օտարել կից հողամասի սեփականատեր Աշոտ Առաքելի Վիրաբյանին (անձնագիր AS 0538036, տրված 25.02.2019թ., 019-ից) 7000 ՀՀ դրամով, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՏԱՃԱՏՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 34

## 0.02643 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Կոտայքի մարզի Պտղնի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-054-0217- կադաստրային ծածկագրից 0.02643 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐՋԱՆԻԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԹԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**